


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2003թ. երրորդ եռամսյակում, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 19842 գործարքներ, որոնց քանակը երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 19.4%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 27.8%-ով: 2003թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի կայունացման միտում:


2003թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. երրորդ եռամսյակում, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8658 օտարման գործարքների 91.1%-ը կազմել են առուվաճառքները, 8.5%-ը նվիրատվությունները և 0.4%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 50.1%-ը արձանագրվել է Երևան քաղաքում և 54.1%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. երրորդ եռամսյակում, երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի



օտարման գործարքների քանակն աճել է 17.4%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 20.4%-ով: 2003թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3855 առուվաճառքի գործարքների 72.5%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 25.9%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 1.1%-ով:

2003թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. երրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլարով/		
		երրորդ եռամսյակ 2003թ.	երկրորդ եռամսյակ 2003թ.	երրորդ եռամսյակ 2002թ.
Կենտրոն	220.0-970.0	392.0	382.8	285.0
Արաբկիր	170.0-5600.0	293.0	268.5	180.3
Քանաքեռ-Զեյթուն	120.0-330.0	181.8	161.2	112.3
Նոր-Նորք	100.0-250.0	140.5	127.8	103.7
Ավան	100.0-190.0	139.1	124.4	88.3
Էրեբունի	100.0-300.0	151.2	138.0	104.7
Շենգավիթ	100.0-250.0	151.1	135.0	106.2
Դավթաշեն	100.0-260.00	177.9	161.2	104.5
Աջափնյակ	90.0-240.0	154.8	136.0	99.4
Մայաթիա-Սեբաստիա	90.0-240.0	147.7	135.4	99.8
Նուբարաշեն	50.0-100.0	67.9	65.8	48.5
Երևան	<b>50.0-970.0</b>	<b>181.6</b>	<b>166.9</b>	<b>121.1</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. երրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 8.8%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 50.0%-ով:

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2003թ. երրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1362 բնակարաններ, որոնց քանակը երկրորդ

եռամսյակի համեմատ աճել է 26.5%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 22.8%-ով:

2003թ. երրորդ եռամսյակում ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. երրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			երրորդ եռամսյակ 2003թ.	երկրորդ եռամսյակ 2003թ.	երրորդ եռամսյակ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.5	62.2	57.9
	Ապարան	18.0-38.0	27.2	27.1	25.6
	Թալին	18.0-38.0	25.1	24.9	21.9
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	54.5	54.1	52.3
	Մասիս	20.0-85.0	54.4	54.2	50.4
	Վեդի	20.0-45.0	31.6	31.4	28.9
	Արարատ	22.0-40.0	31.5	31.4	28.3
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	84.3	83.6	72.6
	Արմավիր	21.0-78.0	45.5	45.3	41.8
	Մեծամոր	17.0-50.0	30.8	30.5	29.0
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	30.5	29.6
	Գավառ	20.0-55.0	30.3	30.1	29.2
	Մարտունի	18.0-55.0	29.5	29.3	28.2
	Վարդենիս	12.0-21.0	17.2	17.0	16.4
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	60.9	60.5	57.5
	Ստեփանավան	20.0-55.0	33.2	33.0	28.8
	Մայիսակ	17.0-43.0	23.9	23.7	22.3
	Այվերդի	17.0-50.0	25.4	25.3	23.1
	Տաշիր	15.0-26.0	19.3	19.2	18.1
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	83.9	82.6	76.7
	Նոր Հաճն	35.0-75.0	52.1	51.6	50.2
	Բյուրեղավան	17.0-48.0	35.2	35.1	32.5
	Եղվարդ	28.0-55.0	40.5	40.2	37.1
	Հրազդան	18.0-65.0	30.7	30.4	28.3
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.7	75.2	72.0
	Չարենցավան	13.0-55.0	31.1	30.7	28.4
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	71.7	69.7	61.2
	Արթիկ	17.0-48.0	25.2	25.1	23.3
	Մարալիկ	15.0-45.0	23.6	23.4	20.7
Սյունիք	Գորիս	21.0-46.0	29.6	29.5	26.9
	Կապան	18.0-55.0	29.1	28.8	25.6
	Միսիան	17.0-57.0	27.5	27.4	24.9
	Մեղրի	18.0-58.0	25.1	24.8	21.8
	Քաջարան	15.0-30.0	18.4	18.2	16.3
Վայոց ձոր	Վայք	15.0-48.0	35.3	35.1	31.0
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.8	46.5	44.9
	Ջերմուկ	20.0-55.0	41.1	40.8	37.7
Տավուշ	Դիլիջան	15.0-55.0	36.2	36.0	31.7

Իջևան	23.0-50.0	40.3	40.3	38.5
Բերդ	15.0-45.0	29.2	29.0	27.0
Նոյեմբերյան	15.0-45.0	26.7	26.6	24.7

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների եռամսյակային աճը կազմել է 0.8%, իսկ տարեկան աճը՝ 9.0%

2003թ. երրորդ եռամսյակում, մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 1167 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 307, մյուս մարզերում միասին վերցրած՝ 860: 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 12.9%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 6.6%-ով, իսկ մյուս մարզերում, միասին վերցրած՝ 15.3%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 26.4%-ով, ընդ որում Երևանում՝ 3.4%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ 37.4%-ով: Ընդ որում 2003թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. երրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		երրորդ եռամսյակ 2003թ.	երկրորդ եռամսյակ 2003թ.	երրորդ եռամսյակ 2002թ.
Կենտրոն	210.0-990.0	399.7	386.0	289.3
Արաբկիր	160.0-580.0	296.0	271.3	181.7
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	183.8	162.7	115.0
Նորք-Մարաշ	120.0-240.0	297.3	289.7	236.8
Ավան	95.0-200.0	140.3	126.0	106.5
Էրեբունի	95.0-320.0	152.3	139.3	108.4
Շենգավիթ	85.0-260.0	152.0	136.0	107.5
Դավթաշեն	105.0-260.0	179.3	162.3	106.8
Աջափնյակ	85.0-230.0	156.0	138.0	101.1
Մալաթիա-Սեբաստիա	95.0-250.0	148.7	136.7	104.3
Նուբարաշեն	55.0-110.0	71.2	68.0	50.3
Միջինը Երևանում	55.0-990.0	197.9	183.3	137.1

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. երրորդ եռամսյակում, անհատական

բնակելի տների շուկայական միջին գները երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 8.0%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 44.7%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. երրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			2003թ. երրորդ եռամսյակ	2003թ. երկրորդ եռամսյակ	2002թ. երրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	82.6	82.2	78.1
	Այսարան	20.0-45.0	38.8	38.6	35.2
	Թալին	15.0-35.0	28.1	28.0	23.9
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	61.7	61.5	57.6
	Մասիս	27.0-80.0	62.4	62.3	59.0
	Վեդի	25.0-60.0	36.3	36.1	34.5
	Արարատ	25.0-60.0	37.4	37.2	34.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	89.4	88.5	76.3
	Արմավիր	35.0-90.0	52.2	52.0	47.5
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	36.4	36.3	34.4
	Գավառ	25.0-65.0	39.9	39.7	37.5
	Մարտունի	20.0-55.0	33.8	33.6	31.8
	Վարդենիս	15.0-45.0	21.3	21.0	19.1
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	68.5	67.7	63.9
	Ստեփանավան	20.0-50.0	33.5	33.1	31.8
	Մալիտակ	17.0-50.0	24.1	24.0	22.7
	Ալավերդի	18.0-50.0	25.8	25.8	24.4
	Տաշիր	15.0-30.0	19.9	19.7	18.6
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	92.2	91.6	87.0
	Նոր Հաճն	35.0-80.0	54.2	54.0	51.2
	Բյուրեղավան	15.0-50.0	38.2	38.1	34.3
	Եղվարդ	23.0-70.0	47.2	47.0	43.1
	Հրազդան	25.0-65.0	39.9	39.7	37.0
	Ծաղկաձոր	45.0-110.0	85.1	84.7	83.3
	Չարենցավան	25.0-50.0	33.3	33.1	31.8
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	90.7	89.6	85.4
	Արթիկ	18.0-55.0	28.6	28.4	25.3
	Մարալիկ	15.0-45.0	23.9	23.8	22.3
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.5	31.3	28.0
	Կասյան	25.0-55.0	31.0	30.8	28.0
	Միսիան	18.0-50.0	28.6	28.3	25.6
	Մեղրի	18.0-40.0	28.2	28.1	23.5
	Քաջարան	15.0-30.0	19.2	19.1	16.7

Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.9	36.8	33.7
	Եղեգնաձոր	20.0-65.0	49.1	48.9	46.6
	Ջերմուկ	25.0-60.0	43.2	42.9	39.3
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.1	39.0	36.6
	Իջևան	30.0-70.0	41.2	40.9	39.5
	Բերդ	20.0-50.0	30.8	30.6	28.2
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.7	30.6	27.7

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 0.6%, իսկ տարեկան աճը՝ 8.1% :

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 1544 գործարքներ՝ 705.22 հա /43.22 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով, որից 588.53 հա գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում, 697.30 հա /42.22 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի, որից 583.08 հա գյուղատնտեսական նշանակության, 5.95 հա /0.60 հա Երևանում/ նվիրատվության, որից 3.88 հա գյուղատնտեսական նշանակության և 1.97 հա /0.40 հա Երևանում/ փոխանակման, որից 1.57 հա գյուղատնտեսական նշանակության գործարքներ:

Առավել մեծ մակերեսով հողեր են վաճառվել Գեղարքունիքի մարզում՝ 158.98 հա, որից 154.86 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 1.06 հա, Տավուշի մարզում, որից 1.00 հա գյուղատնտեսական նշանակության:

Ստորև ներկայացվում է 2003թ. երրորդ եռամսյակում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			Բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				Բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	98	6.59	49	20.45	0	0.00	142	8.15	41	3.68
Արագածոտն	5	53.46	31	3.72	0	0.00	54	29.14	27	2.86	1	0.50
Արարատ	0	0.00	9	0.91	3	0.07	184	63.54	87	7.23	1	0.02
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	132	137.28	53	4.41	2	0.75
Գեղարքունիք	22	150.80	1	1.00	0	0.00	4	4.06	3	0.21	2	1.91
Լոռի	0	0.00	14	1.33	0	0.00	33	20.79	4	0.62	4	0.83
Կոտայք	7	4.25	88	8.24	6	15.41	95	41.51	181	17.30	1	0.19
Շիրակ	0	0.00	0	0.00	1	0.13	55	63.69	24	0.93	2	0.12
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	11	11.09	0	0.00	1	0.40
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	2	0.45	8	2.49	5	0.52	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	2	1.00	2	0.07	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>34</b>	<b>208.51</b>	<b>241</b>	<b>21.79</b>	<b>61</b>	<b>36.51</b>	<b>578</b>	<b>374.59</b>	<b>528</b>	<b>42.30</b>	<b>55</b>	<b>8.40</b>

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 1507 առուվաճառքի գործարքներ, որից 612-ը՝ գյուղատնտեսական, 885-ը՝ բնակավայրերի, 10-ը՝ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. երրորդ եռամսյակում հողերի առուվաճառքներից 257-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 77-ը՝ /7.57 հա/ Երևանում, իսկ 180-ը՝ /224.74 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 34 միավորը /208.51 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական, 211-ը՝ /19.80 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 10-ը՝ /3.21 հա/ հասարակական կառուցապատման և 2-ը՝ /0.79 հա, Կոտայքի մարզում/ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վաճառված 10 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 1 միավորը գրանցվել է /1.00 հա/ Գեղարքունիքի, 3-ը՝ /0.86 հա/ Կոտայքի մարզերում և 6-ը՝ /3.35 հա/ Երևանում:

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 612, այդ թվում աճուրդ-վաճառքների 34 և դատարանի վճռով 4 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	5	53.46	130.0	205.0	180.0	50	18.0	840.0	7600.0	2297.0
Ապարան						1	0.60	130.0	1150.0	300.0
Թալին						2	4.50	200.0	1680.0	353.0
Ծաղկահովիտ						1	6.04	170.0	2100.0	301.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						104	29.34	740.0	10000.0	2000.0
Մասիս						30	9.31	400.0	5600.0	1045.0
Վեդի						47	24.24	450.0	7200.0	1175.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						30	24.50	650.0	4650.0	1220.0
Բաղրամյան						36	71.28	130.0	1000.0	414.0
Վաղարշապատ						65	41.10	980.0	11150.0	2115.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	0.64	420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի	1	3.00	360.0	360.0	360.0			100.0	4000.0	475.0
Սևան						1	0.25	100.0	1000.0	400.0
Վարդենիս	21	147.80	362.0	364.0	363.0	1	3.17	60.0	1180.0	230.0
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի						11	5.28	360.0	5500.0	865.0
Գուգարք						5	1.10	500.0	6000.0	1267.0
Սպիտակ						1	0.54	500.0	3300.0	1087.0
Ստեփանավան						7	3.85	180.0	4000.0	330.0
Տաշիր						9	10.02	100.0	400.0	240.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	5	3.78	95.0	1235.0	454.0	52	17.21	520.0	10100.0	4647.0
Եղվարդ						29	15.02	380.0	6100.0	2450.0
Հրազդան	2	0.46	880.0	880.0	880.0	14	9.28	250.0	4000.0	770.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						38	25.02	550.0	760.0	655.0
Ամասիա						9	21.52	80.0	525.0	190.0
Անի						6	15.10	240.0	800.0	295.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ						2	2.05	140.0	800.0	260.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան						1	1.76	120.0	2000.0	330.0
Մեղրի						1	0.22	400.0	4240.0	872.0
Սիսիան						9	9.11	90.0	1500.0	300.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	1.98	260.0	4000.0	1100.0
Վայք						3	0.52	120.0	3400.0	395.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	460.0
Իջևան						2	1.00	530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան								100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 529 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 143, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	31	37200.0	64.0	64.0	64.0	25	27060.0	120.0	3800.0	2240.0
Ապարան						1	1000.0	120.0	670.0	310.0
Թային						1	570.0	78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	9	9100.0	88.0	1060.0	953.0	12	12270.0	175.0	2460.0	650.0
Մասիս						66	50960.0	270.0	3680.0	808.0
Վեդի						9	9110.0	115.0	1000.0	495.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						15	15697.0	180.0	2440.0	697.0
Բաղրամյան						1	1200.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						37	27197.0	280.0	3700.0	1280.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	1900.0	180.0	1000.0	520.0



Ճամբարակ	1	10000.0	112.0	112.0	112.0			78.0	180.0	140.0
Մարտունի						1	245.0	120.0	320.0	225.0
Սևան								120.0	1000.0	225.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	900.0	78.0	440.0	200.0
Գուգարք								78.0	3800.0	630.0
Սպիտակ	9	11250.0	77.0	77.0	77.0	1	1530.0	78.0	450.0	160.0
Ստեփանավան	5	2000.0	103.0	103.0	103.0	2	3750.0	78.0	340.0	142.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	28	22410.0	27.0	200.0	100.0	100	89143.0	180.0	4300.0	1465.0
Եղվարդ	60	60000.0	86.0	86.0	86.0	68	74727.0	180.0	3670.0	1920.0
Հրազդան						13	9128.0	180.0	4120.0	1310.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						24	9345.7	120.0	2500.0	400.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի								120.0	430.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս								78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Սիսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	5200.0	78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						2	680.0	78.0	1600.0	457.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

Պետք է նշել, որ հանրապետությունում 2003թ. երկրորդ եռամսյակում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 25 գործարքներ 20.57 հա մակերեսով, ընդ որում 2-ը Երևանում /0.10 հա/, 12-ը Արարատի /4.14հա/, 2-ը՝ Արմավիրի /2.0 հա/, 2-ը Գեղարքունիքի /1.76 հա/, 5-ը Շիրակի /12.27 հա/ և 2-ը Սյունիքի /0.40 հա/ մարզերում:

2003թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1559 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.9%-ը: Ընդ որում վարձակալության գործարքների 44.7%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 4.5%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 4.4%-ով: 2003թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 117 բնակարանների, 38 բնակելի տների, 467 հասարակական, 32 արտադրական նշանակության օբյեկտների, 2 ավտոտնակների և 902 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 130 վարձակալության գործարքների քանակները երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 65.8%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 43.0%:

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 5019.16 հա ընդհանուր մակերեսով հողեր /18.83 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 4292.05 հա կազմում են գյուղատնտեսական /որից 174.28 հա նախկին պահուստային/, 673.57 հա բնակավայրերի, 1.86 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արմավիրի մարզում՝ 1516.69 հա , որից 887.17 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր վարձակալվել են Վայոց Ձորի մարզում՝ 26.44 հա, որից 20.73 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 765.92հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. երրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	50	643.16
Արարատ	0	0.00	89	269.80
Արմավիր	0	0.00	26	887.17
Գեղարքունիք	5	323.00	70	559.57
Լոռի	5	139.00	11	26.47
Կոտայք	2	200.00	78	172.45
Շիրակ	0	0.00	86	686.10
Մյունիք	5	103.92	28	198.37
Վայոց Ձոր	0	0.00	9	20.73
Տավուշ	0	0.00	17	62.30
<b>Ընդամենը</b>	<b>17</b>	<b>765.92</b>	<b>464</b>	<b>3526.13</b>

2003թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1092 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակն երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 8.6%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 59.2%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 43.1%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից, իսկ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /22.5%/, առանձնատների /15.4%/ և հողերի /9.4%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 630 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակն երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 8.4%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 36.4%-ով:

2003թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 55.32 հա մակերեսով հողեր /1.27հա Երևանում/, որից 53.11 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 18.02 հա, որից 17.90 գյուղատնտեսական նշանակության:

2003թ. երրորդ եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 61 և 16 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2003թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 5.5%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 59.3%-ով: 2003թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 37.7%:

2003թ. երրորդ եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 2964 գործարքներ, որոնց քանակը երկրորդ եռամսյակի համեմատ աճել է՝ 28.6%-ով, իսկ 2002թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 51.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.9%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /50.0%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***